

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՏ ՏՔԹ. ՉԱՒԵՆ ԵԿԱՒԵԱՆԻ

Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական Բաժնի Վարիչ՝ Տքթ. Չաւեն Եկաւեան, որ ընտանեօք Ստանպուլ կը գտնուէր, 1 Սեպտեմբեր 2005, Հինգշաբթի, ժամը 17.00-ին պատուասիրուեցաւ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի համանուն մատրան բակին մէջ սարքուած համայնքային ընդունելութեամբ:



Նախագահեց Ն.Ա.Տ. Մետրոպ Ս. Պատրիարք Հայրը: Ներկայ գտնուեցան Ատենապետ՝ Պետրոս Շիրիսողլուի գլխաւորութեամբ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան ամբողջական կազմը, Բժշկապետ՝ Տքթ. Արման Զաքըրոլլուի գլխաւորութեամբ բժշկական դասը, համայնքային, թաղային մարմիններու ներկայացուցիչներ, բարերարներ, կրթական մշակներ եւ համայնքային գործիչներ:

Հունկ բանքը արտասանեց Ն.Ա.Տ. Մետրոպ Ս. Պատրիարք Հայրը: Նորին Ամենապատուութիւնը անդրադարձաւ, որ Կիւլպէնկեան Հիմնարկը մօտիկ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ սփիւռքահայ կրթական յարկերու եւ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի նկատմամբ, որուն մէջ իր դրական դերն ունէր Տքթ. Չաւեն Եկաւեան, որպէս վարիչը՝ հիմնարկի Հայկական Բաժնին: Նորին Ամենապատուութիւնը ապա ընդգծեց սփիւռքահայ իրականութեան մէջ ազգային վարժարաններու ցանցին կարեւորութիւնը, քանի որ ուծացման վտանգին հետ դժ յանդիման են աշխարհով մէկ տարածուած շուրջ վեց միլիոն հայորդիներ: Պատրիարք Հայրը գնահատեց սփիւռքահայ կրթական օճախներու գոյատեւման համար հիմնարկի հայկական բաժնի տարած աշխատանքները: Շեշտեց, թէ եկեղեցիներու առաքելութեան զուգահեռ՝ սփիւռքահայ վարժարաններու առաքելութիւնը անփոխարինելի է սփիւռքի մէջ տոհմիկ եւ հոգեւոր ինքնութեան պահպանման համար:

Նորին Ամենապատուութիւնը ապա յակամայս բաղդատութիւնը ըրաւ Կիւլպէնկեան Հիմնարկի եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) գործունեութեանց միջեւ եւ ցաւ յայտնեց, որ ՀԲԸՄ-ը սա վերջին 80 տարիներուն օժանդակած չէր պոլսահայ համայնքի կրթական, կամ ընդհանրապէս, համայնքային հաստատութիւններուն: Պատրիարք Հայրը անդրադարձաւ նաեւ Կիպրոսի Մելգոնեան Վարժարանը փակելու տխուր որոշումին: Անգամ մը եւս շեշտեց, թէ ՀԲԸՄ-ի Վարչութեան այս ուղղութեամբ առած որոշումը սխալ է: Զանի որ այս վարժարանը ոչ միայն ազգին վարժարանն է, այլ նաեւ այս վարժարանի գոյատեւման համար մեծագումար հարստութիւն մը յատկացուած է ՀԲԸՄ-ին, եւ զայն մատակարարելու իրաւունքը Երանաշնորհ Չաւեն Պատրիարքի կողմէ փոխանցուած է: ՀԲԸՄ-ը, ցարդ ոչ մէկ կերպով հրապարակում ըրած է այս մեծագումար հարստութեան ճակատագրին մասին:



Նորին Ամենապատուութիւնը ըսաւ.

**«Կարելոր է մեր ազգային-կրօնական, մշակութային եւ եկեղեցական սրբութիւններուն մօտենալ այնպէս, ինչպէս կը մօտենային այդ աւանդները մեզի աւանդող բարերարները: Այսօրուան վարիչները պետք է յոյս ներշնչեն մեր ժողովուրդին: Այդ կարելի կ'ըլլայ միմիայն մշակելի ծրագիրներով: Երիտասարդները յուսադրուելու պետք ունին ապագայի մասին»:**